ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 110-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ աշխարհասփյուռ հայեր, սիրելի՛ հայրենակիցներ, այսօր մենք հերթական անգամ ոգեկոչում ենք Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակը:

Հայեր, ովքեր զոհ դարձան համամարդկային ողբերգության՝ իրենց հավատի ու ազգային պատկանելիության համար:

Հայեր, ովքեր ենթարկվեցին էթնիկ զտման, բայց որպես ազգ չկորցրին իրենց հայկականությունն ու արմատները:

Դարեր շարունակ մենք ստիպված ենք եղել սեփական կյանքի գնով պահպանել մեր հայրենիքի խաղաղությունը: Մայր Հայաստանի ընդերքը լի է իր զավակների արյամբ, ուստի առավել թանկ ու սիրելի է:

Որքան էլ թշնամին փորձել է ջլատել հայոց ողնաշարը, մեր պատվարժան այրերը շարունակել են կռվել զենքով, գրչով ու տաղերով: Մեր վանքերը քանդել են, բայց մեր հավատը մնացել է անսասան: Այրել են մեր գրքերը, բայց մեր շարականները շուրթից շուրթ են անցել: Ոչինչ չի կարողացել լռեցնել հայոց անկոտրում ոգին: Մենք եփվել ենք կռվի ու խաղաղության մեջ:

Սիրելի՛ հայրենակիցներ, այսօր յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն է չդավաճանել Մայր Հայաստանը:

Մենք՝ որպես ցավի կրողը, պարտավոր ենք աշխարհի հայացքն ուղղել դեպի մեզ՝ կոչ անելով բացառել ցանկացած ոճրագործություն աշխարհի յուրաքանչյուր անկյունում:

Պարտավոր ենք զինվել ոգով, կամքով ու հավատով, պայքարել հանուն գալիքի:

Թող խաղաղություն իջնի մեր սուրբ նահատակաց հոգիներին ու աշխարհին Հայոց:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան